Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 13 — ՆՈՅԵՄԲԵՐ 25, 1899. ՇԱԲԱԹ, ՆԻՒ ԵՈՐՔ։ — NOVEMBER 25, VOL. I No. 13

ԲԱԺՆԵԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՄԱՐ
Տարեկան $1.50
Վեցամսեայ 0.85
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—o—
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր։
—
ԳԻՆ 3 ՍԷՆԹ։

# ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

TZAIN HAIRENIATZ
AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՑԷ
AMERICAN HAI PUBLISHING Co
209 E. 23d St., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter

Subscription $1.50 a Year.




ԲՐՈՎԻՏԷՆՍԻ ՀԱՅ ՆՈՒԱԳԱԾՈՒԱՑ ԽՈՒՄԲ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ ԲՐՈՎԻՏԷՆՍԻ ՀԱՅ ՆՈՒԱԳԱԾՈՒԱՑ ԿՈՂՄԱՆԷ

Ամերիկայի հայոց միակ ու անդրանիկ Նուագածուաց Խումբը Նոյեմ. 30ին նուագահանդէս մը պիտի տայ Նիւ Եորքի և շրջակայից մեր ազգայնոց։ Խումբս լաւ պատրաստուած՝ հայկական ու ամերիկեան ընտիր կտորներ պիտի նուագէ։

Նախ՝ ամենայն վստահութեամբ կը յայտարարեմ թէ հանդիսականները ինքզինքնին եւրոպական կիրթ ու վարժ նուագահանդէսի մը մէջ պիտի գտնեն. ապա կուգամ ըսելու թէ այս պարագան մեր Նիւ Եորքի և շրջակայից ազնիւ ազգակիցներուն համար երկու թանկագին շարժառիթ կ'ընծայէ. մին՝ որ իրենց ներկայութեամբ վայելեն երաժշտութեան խանդավառումը հայկական ներշնչութեամբ տոգորուած, միւսն է՝ քաջալերել երաժշտութեան արուեստը մեր մէջ, որն մեզ ազնուացնելու, մեր ճաշակը նրբացնելու, մեր կիրքերը ներդաշնակելու և մեր հոգիները բարձրացնելու իր յատուկ դերը ունի։ Ուստի խրախուսանք ունիմ սպասելու թէ ամեն հայ, երկու սեռէն ալ, յօժարութեամբ պիտի պատուեն ու խրախուսեն սոյն հանդէսը։

Հանդիսավայրն է 23րդ փողոց, 4րդ Աւէնիւին մօտ. Երիտասարդաց Քրիստոնէական ընկերութեան, Y. M. C. A.ի մեծ ժողովարանին մէջ։

Հանդէսը կը բացուի երեկոյեան ժամը ճիշդ 8ին.

Ի Դիմաց Խմբին
Հիմնադիր — Տնօրէն
Յ. ՍԱՐԿԱՒԱԳԵԱՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԴՈՒԽԱԲՈՐՆԵՐ (1)

(Ժողովրդագրական Նիւթեր Ռուսա—Հայաստանից)

Միս չեն ուտում։ Կենդանիներ սպանել, մորթել բնականաբար համարում են վայրենութիւն, բրտութիւն և անգթութիւն. «Հերիք չէ որ մենք դրանց ամբողջ կեանքի մէջ մեր օգտին ծառայեցնում ենք և օգտւում՝ ինչ որ իսկ շատ բաւական է՝ խեղճերին մորթենք և ուտե՞նք»։ Հետեւաբար իրանց գլխաւոր սնունդ կը բաղկանայ բուսեղէններից եւ իւղային կերակուրներից։ Իրանք իբրեւ ռուսեր, ծայրահեղ թէյամոլ, վերջին տարիները սակայն, իրանց բոլոր համայնքներով որոշեցին ատոր գործածութիւնն էլ թողուլ, որմէ դոյացած շահը որոշել էին ուղարկել իրանց բազմաթիւ աքսորականներին։ —Ի՜նչ սրտառուչ և անկեղծ զոհողութիւն։

Չունին և կրօնական հաւատալիքների ձանձրալի և բազմատեսակ ծիսակատարութիւններ, ինչպէս իրանց անունն ցուցնում է. իրանք աւելի ըմբռնում են իրանց կրօնական և բարոյական հաւատալիքներ իբր հիմն Քրիստոսի վարդապետութեան և աւետարանի ոգին և ոչ թէ տառ։ Սրանով էլ իրանց կրօնն նոյնքան պարզ է և միանգամայն գաղափարական, որքան իրանց կեանքն և պայմաններ։

Եկեղեցի ասած շէնք չունին. ամեն տեղ ուր հաւաքւում են մի քանի հաւատացեալներ աղօթելու, լինի տուն, դաշտ կամ բանտ՝ հոն արդէն պատրաստ եկեղեցի է։ «Միթէ՞ Աստուած մեր աղօթք ընդունելու համար պէտք ունի յատուկ շինութեան մը և միթէ՞ մեր կրօնասիրութեան ապացոյցներ այնատեն առատօրէն տուած կը լինինք երբ հիմնում ենք փառաւոր և մեծածախս եկեղեցիներ, միթէ՞ Աստուած ատոնցմով չլանալու է երբ անդին մեր աղքատներ մերկ, նօթի և անբաններ պէս անօթի կը մեռնին, երբ անարդարութիւն ամեն հաստատութիւնների և նոյն իսկ սրբազան կոչուած եկեղեցական կազմակերպութեան ծոցին մէջն իսկ թափանցել է։»

Չունին և ոչ իսկ կրօնական արարողութիւններ. իրանց աղօթքներն լոկ սրտաբուղխ արտայայտութիւններ են ըստ ժամու և տրամադրութեան։ Առաւօտ, երեկոյ ամեն անհատ կատարում է՝ ուր և էլ լինի՝ իրա կրօնական պաշտաւորութիւն։ Չը գիտեն ոչ քահանայ, ոչ վարդապետներ. ամեն անդամն ինքն կ'ըստանձնէ կրօնական այդ պարտաւորութիւններին հոգ, հարկ պահանջած ատեն՝ լինի թաղումի, պսակի, մկրտութեան ևն. պարագաների մէջ։

Պսակ կը կատարուի ինքնին երկուստեք նշանած ամոլներ համայնքին առաջ իրանց ձեռքն և սիրտ իրարի կը խոստանան և կուխտեն հաւատարմօրէն պահել զանի, համայնքի և բարեկամների ներկայութեամբ։ Եւ այդքան։

Անհաւատարմութեան դէպքեր հազիւ կը պատահին։

Համարում են որ Քրիստոս մի անգամ աշխարհք գալով՝ անբաժան է մնացել իրան հաւատացողներից, ընդունելով այս հիման վրայ Նրա չարչարանքն, մեռնիլը և յարութիւնը, չեն ընդունած համբարձումն այնպէս, ինչպէս մենք ըմբռնում ենք։

Կանոնաւոր դպրոցներ չունին թէև, սակայն հետեւում են նախնական կրթութեան, անկէ աւելին անպէտ և վնասակար համարելով։ «Շատ ուսումնականներ ծոյլեր կը լինին (?) և չեն զիջանելու մեր պարզ կեանքին և կենսունակ աշխատութեան. շատ գիտութիւն մոլորեցնում է բանականութիւն եւ բարեմտութիւն. մարդս որքան պարզ և միամիտ մնայ, այնքան էլ հաւատարիմ կը մնայ եղբայրասիրութեան և բարեկամութեան կանոններին....»

Զէնք և ամեն սպանութեան գործիներ կատեն իբրև հակամարդկային եւ հակաքրիստոնէական առարկաներ։ «Երբ մենք մեր քրիստոնէութիւն խոստովանում և արտաքին այնքան փառաւոր ջատագովութիւններով հռչակում ենք, կեղծաւորութիւն չէ՞ երբ դեռ մեր բոլոր ոյժեր մենք գործադրում ենք մի միայն իրարի զրկելու, իրարի սպաննելու և ջնջելու համար։»

Զէնք և պատերազմ, շահամոլութիւն և եսասիրութիւն, քրիստոնէութիւն եւ մարդասիրութիւն գաղափարի հետ, անոնց մաքուր հոգիներում չեն կարող հաշտուիլ երբէք։ Այդ բանից առաջացել է և իրանց խորին զզուանք դէպի զինուորութիւն, որի համար այնքա՜ն տառապեցան. նեղուեցան, սակայն երբէք չի սասանեցան, չի զիջան։ Եւ գաղափարի այս անդրդուելի տոկունութիւն՝ սոյն միափ տգէտ, մուժիկ և նահապետական հասարակութեան առանձնայատուկ փառք պիտի մնայ։

Չի նայած իրանց ատելութեան դէպի զէնքն ու զինուորութիւն, նրանք Կովկաս տեղափոխուելէն ետքն էլ ռուս կառավարութեան թէև ակամայ և դժկամակ, բայց զօրք կուտային։

Սակայն, պատմածնուն նայելով՝ օր մը երբ իրանց համայնական գլխաւորներից ընդհ. բարեգործական գումարների գանձապահ նշանաւոր կին մը կը մեռնի Ախալքալաքի մօտերքում, նրա մի ինչ որ ազգականն փորձութիւն կունենայ հանրային այդ նպաստի փողեր իւրացնելու։ Գործը դատարանին կիյնայ և ինչ կասկած որ դատաւորներ կաշառուած ի մեծ զարմանս եւ յուսախաբութիւն Դուխաբօր հասարակութեան, դատը կը վճռուի գողին և յափշտակողին նպաստաւոր։

Ս—Մ.

(Շարունակելի)

(1) Շարունակութիւն 12րդ թուէն։

